

223

Պրեխառքներ բոլոր յարկըների, միացե՛ք

Տ

Լ. ԲԵՐԻԱ.

Ա Ս Ֆ Խ Հ Հ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՎԵՐԱԿԱՐՈՒԹՅՈՒՄԸ

(Անդրկովկասի կուսկազմակեայությանների  
7-րդ համազումարտմ՝ տպած Անդրյակովի  
հուշվեան գեկուցումից)

338.1(47)

f - 55

17 FEB 2010

338.1(47)

Պրովինցիալ բանք յերկրության, միացի՛ք


F-55

L. ԲԵՐԻԱ

Ա.Ս.Ֆ.Խ.Հ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՐՈՒՑՈՒՄԸ

8676  
1006  
28151

(Ա.Ներկայի կուսկազմակերպությունների  
7-րդ համագումարում տրված Անդրյանի  
հաօպեռն զեկուցումից)



01 MAR 2013

3233 - 91

Թարգմ. Խմբագրեց՝ Աշիկ Ղազարյան  
Տեխն. խմբագիր՝ Պ. Սարոյան  
Մըրագրիչ՝ Սոս Հակոբյան  
Հանձնվել ե արտադրության 1934 թ. հունվ. 23-ին  
Մառագրվել ե տպագրելու 1934 թ. հունվ. 23-ին  
Քլավիստ № 35 Տիրած 2000 Պատվեր № 57  
Մեկ տպագր. թերթում 76.800 տպ. նշ.

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՂԱՐԱՏԻ ՏՄԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50



L. ԲԵՐԻԱ

## ԱՍՖԻՀ-Ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐՍԱՌՈՒՑՈՒՄԸ

Ընկերներ, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների յոթերորդ համագումարն աշխատանքի յև ձեռնարկում այնպիսի պայմաններում, յերբ մեր կուսակցությունը սեղմարքերով գնում է իր 17-րդ համագումարը, տարած լինելով համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ՝ 16-րդ համագումարից մեզ բաժանող ժամանակաշրջանում:

Խորհրդային յերկիրն առաջին հնգամյակի տարիներին ավարտեց սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:

Խորհրդագաման նոր, հզոր ոչախներ աճեցին այժմ Խորհրդապատճենականացնելում:

Մետաղաձուլման, քիմիայի, մեքենաշինության մեծագույն հսկանելը դարձրին մեր յերկիրը տեխնիկայի տեսակերպից առաջավոր ինդուստրիալ յերկրներից մեկը:

Մեր գյուղատնտեսական մեքենաշինությունը՝ թե իր արտադրանքի ծավալով և թե իր տեխնիկական մակարդակով, առաջին տեղը գրավեց աշխարհում:

Զախարիավեց կապիտալիստական շահագործման վերջին հենարանը՝ կուլտուրական և սուսական գույքի տարածումը, գյուղացիության հիմնական մասնաւրը, գարձան Խորհրդային իշխանության հաստատումն աղատվանդանը՝ գյուղում:

Սոցիալիստական դաշտի մշակների լայն մասսաների գիտակցության մեջ բեկում առաջացավ կոլեկտիվ աշխատանքին, սոցիալիստական սրբազն սեփականության պահպանությանը ցուցաբերվող վերաբերմունքի մեջ:

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ գյուղի աշխատանքի նոր պայմաններին վերաբերյալ պատմական ցուցումները՝ տրված ՀԱՄԿ (բ) Կինտկոմի ու ԿՎՀ-ի հունվարի պլենումում, կուսակցության առաջնորդի լողունզը՝ ունեսը կոլտնտեսական կանքի մասին,

զինեցին կոլտնտեսական լայն մասսաներին և պայքարի հանեցին նրանց բոլցկիկյան կոլտնտեսությունների համար:

Արդեն անցյալ տարի իրականացնելով առաջնորդի պատմական ցուցումները, տաճյակ հազարավոր կոլտնտեսություններ դարձան բոլցկիկյան, իսկ կոլտնտեսականներն՝ ունեոր:

Այդ նվաճումները կուսակցության հիմնական գծի հաղթանակն էն, ինինյան այն քաղաքականության հաղթանակը, վորն անհողողող շարունակում եր ինինի դրծի պողպատակուռ շարունակողը, մեր ժամանակի մեծագույն տեսքանը, կուսակցության և համայն աշխարհի ճնշված մարդկության առաջնորդը ընկեր Ստուինը:

Այժմ Խորհրդային Միության միլիոնավոր պրոլետարները և աշխատավորները հսկայական խանդավառությամբ քննարկում են հսմաշխարհային պատմական նշանակություն ունեցող աշխատանքների ծրագիրը՝ ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության զարգացման յերկրորդ հսկայա պլանի վերաբերյալ ընկ. ընկ. ՄՈՒԾՈՎի և ԿՈՒՅԲԻՇԵՎի ղեկուցման թեղերը, ընկ. ԿԱԳԱՆՈՎի ղեկուցման և խորհրդային շինարարության խնդիրներին վերաբերյալ ղեկուցման թեղերը:

Այդ թեզերը պատկերում են մեր առաջ սոցիալիզմի հետագա հոյակապ այն հաղթանակները, վորով վստահ ու կորով առաջ և գնում մեր կուսակցությունը:

Յերկրորդ հնդամյակում վերջնականապես կվերացվի կուլակությունը, վորպես դասակարգ, կավարտի համատարած կոլեկտիվացումը, 2-րդ հնդամյակը լիակատար կերպով կվոչնչացնի դասակարգային տարրերություններ ծնող պատճառները:

Յերկրորդ հնդամյակում մենք կավարտենք ժողովրդական տնտեսության վերակառուցումը՝ մեր սեփական ծանր արդյունաբերության բազայի վրա:

Ընկերներ, մեր ձեռք բերած հաջողությունները չտեսնիած նպաստավոր պայմաններ են ստեղծում հետագայում ել ավելի արագորեն առաջ գնալու բանվորների ու զյուղացիների նյութական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղիով:

Այդ խնդիրը պահանջում ե առավելագույն չափով ծավալի ապրանքաշրջանառությունը, լայն սպասման արդյունաբերական ապրանքների արտադրությունն ավելացնելու և քաղաքին զյուղատեսական մթերքների մատակարարումը բարելավելու հիման վրա:

Ապրանքաշրջանառությունը, ինչպիս և տրանսպորտի բոլոր տեսակների, մանավանդ յերկաթուղային տրանսպորտի ուժեղացման խնդիրն այժմ հանդիսանում են սոցիալիստական շինարարության ամենակարևոր խնդիրները:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը վերջնականապես ամրացավ սոցիալիզմի հանապարհին, դառնալով միջադաշտին պրոլետարական հեղափոխության անառողիկ բերդը:

Մի կողմից սոցիալիզմի կառուցման պատմական հաղթանակները ԽՍՀՄ-ում, մյուս կողմից շարունակվող համաշխարհային տնտեսական ճգնաժամն առաջ են բերում ներկա եպոխայի հիմնական հակասության— յերկու սիստեմների պայքարի—հետագա եկ ավելի սրումը:

Ուժեղացել ե ԽՍՀՄ-ի զեմ ուղղված հականեղափոխական պատերազմի վտանգը, վորովհետև ուժեղացել ե Խորհրդային Միության, վորպես ամրոջ աշխարհի համար սոցիալիստական վարուսի, հեղափոխականացնող ղերը:

Ուժեղացել ե նաև կապիտալիստական յերկրների միջև պատերազմի վտանգը:

Հեռավոր Արևելքում ծագոնիան արդեն պատերազմ ե մղում, վորպեսզի բռնի կերպով լուծի Խաղաղ-Ովկիանոսյան հակասությունները հոգուա իրեն:

Յեվրոպայում, գերմանական ֆաշիզմը ճգնում ե բռնի կերպով լուծել Վերաբյլի հակասությունները հոգուա իրեն:

Իմպերիալիստական բոլոր հակամարտությունների սրվելը և բուրժուազիայի փորձերը պատերազմի մեջ յելք դանելու ճգնաժամից, հասել են այսպիսի աստիճանի, վոր հիմք տվին կոմինտերնի Գործկոմի վերջերս ավարտված 13-րդ պլենումին արձանագել ներկայումս «իմպերիալիստական նոր պատերազմի նախորյակը»:

Կապիտալիզմի բանակում իմպերիալիստական պատերազմ նախապատրաստելու պայմաններում ԽՍՀՄ-ն հանդես է գալիս, վորպես խաղաղության խոշորագույն գործուն:

ԽՍՀՄ-ի, վորպես միջազգային գործոնի, հարածուն նշանակությունը, ամենավերջին ժամանակներս ցայտուն արտահայտություն գտավ Միացյալ Նահանգների հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մեջ:

Խորհրդային Միությունն ամրապնդվեց այնքան, վոր—

«ԽՍՀՄ-ի վրա ուղղված զինված հարձակումն այժմ գլխավոր վտանգ ե նշանակում նրանց համար, ովքեր կհանդինեն խախտել խաղաղությունը և հարձակում գործել Խորհրդային Միության վրա» (Խորհուրդների 6-րդ համագումար):

Այնուհանդեմ կան ուժեր, վորոնք ձգտում են խախտել խաղաղությունը և հարձակել Խորհուրդների յերկրի վրա:

Ներկա ետապում ձավոնիան և Գերմանիան հանդիսանում են ընդհանրապես իմալերի ամառավական պատերազմի և մանավանդ հականեղափոխական, հակախորհրդային պատերազմի գլխավոր նախաձեռնողները: «Եյդ և իրական վտանգը, — ասել եր ընկ-Ստալինը Դյուրանտիի հետ իր ունեցած վերջին զրույցում ձաւ-պոնիայի ռազմական պատրաստությունների մասին, — և մենք հարկադրված ենք պատրաստիել դրան: Վոչ մի ժողովուրդ չի կարող հարգել իր կառավարությանը, յեթե նա տեսնում ե հար-ձակման վտանգը և չի պատրաստվում ինքնապաշտպանության»: Ահա թե ինչո՞ւ, յեթե չնայած խաղաղությունը պաշտպանելու մեր բոլոր ջանքերին, այնումենայնիվ հարձակումը տեղի ունենա-մենք, բերելով ընկ. Մոլոտովի խոսքերը.

«Մեր խնդիրը կհամարենք միայն մի բան. այդ խնդիրն ե մեր հակառակորդի լիակատար ջախջախումը և մեր Կար-միր Բանակի հաղթանակը»:

Ըսկերներ, վոչ միայն ամեն մի կուսակցականի, ամեն մի անկուսակցականի, այլև մեր յուրաքանչյուր վոխերիմ թշնամու համար կատարելապես պարզ ե, վոր սոցիալիզմի կառուցման ասպարիզում Խորհուրդների յերկրի վիթխարի հաջողությունները և պաշտպանուակության հզորագույն ամրացումը ձեռք են բերվել միմիայն շնորհիվ ՀԱՄԿ (բ) Կ-ի լենինյան Կենտկոմի և մեր յերկրի հաղթանակների կազմակերպիչ մեծ, անխորտակելի Ստա-լինի հանճարեղ ղեկավարության:

Ըսկերներ, ՀԱՄԿ (բ) Կ-ի 17-րդ համագումարին և Անդրկով-կասի կոմունիստական կազմակերպությունների 7-րդ համա-գումարին, Անդրֆեներացիան ամբողջ Խորհրդային Միության հետ միասին դաշիս և խոշոր հաղթանակներով, վորոնք նրան կանգնեցնում են Խորհրդային Միության առաջավոր յերկրների շարքը:

Անդրկովկասի բոլշևիկները կարողացել են ձեռք բերել այդ հաջողությունները, շնորհիվ լենինյան աղքային քաղաքակա-

նության ձիւա կիրառման, վորպես հետեանք Անդրկովկասի քա-ղաքական ու տնտեսական ամրացման, յերբ միաժամանակ ծա-վալվել ե նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների լայն ինքնագությունը և տնտեսական նախաձեռնությունը:

Այժմ արդեն չի գործի առողջ դատողություն ունեցող մբ մարդ, վորը չհասկանա, վոր բազմադիմի Անդրկովկասի մայմաններում, սոցիալիզմի կառուցման գործին աշխատավորության լայն մասսաների ներգրավ-ման այն ձևը, վորն առաջարկել ելին լենինը և Ստալինը — Անդրֆեներացիան հանդիսանում ե մի-ակ ձիւա ձևը, վորն ապահովում ե ազգային խաղա-ղությունը, գյուղի ձիւա քաղաքական ղեկավա-րումը, յերկրի արագ ինդուստրացումը և գյուղա-տնտեսության սոցիալիստական վերակառուցու-մը, աշխատավորների նյութական բարեկեցության բարեկա-վումը և նրանց կուլտուրական մակարդա-բար բար ձրացումը:

Անդրֆեներացիայի ամրացման համար, մեր հաջողություն-ների և նվաճումների համար մղվող պայքարի ուղին այն պայ-քարի ուղին ե, վորը մղվում ե ֆեռագական-կապիտալիստական հարաբերությունների մնացորդների դեմ, բուրժուական նացիո-նալիստական, հականեղափոխական կուսակցությունների՝ դաշնակ-ների, մենշևիկների և մուսավաթականների դեմ մղվող պայքարի ու ջախջախման ուղին ե, մեր կուսակցության մեջ նացիոնա-լիստական, հականեղափոխական տարրերի դիմադրությունն ար-տացոլող ուղղությունիցը մերկացնելու ու ջախջախելու ուղին ե:

Անդրֆեներացիան, Անդրկովկասի ժողովուրդների յեղբայ-րական գործակցության այդ որգանը, ստեղծվել ե լենինի ու Ստա-լինի նախաձեռնությամբ:

Դեռ 1921 թվականին լենինը «Կովկասի կոմունիստներին» ուղղած իր նամակում գրել եր՝

«Անդրկովկասի հանրապետությունների սերտ դաշին-քը կհանդիսանա բուրժուազիայի որով չտեսնված և բուր-ժուական իրավակարգում անհնարին աղքային խաղաղու-թյան որինակը»:

Լենինի այդ ցուցումը կանխորոշեց Անդրֆեներացիայի ստեղծումը: Անդրֆեներացիան աճեց, տնտեսապես ու քաղաքա-կանապես ամրացավ ու կոփվեց նացիոնալիզմի ու նացիոնալիս-

տական թեքման դեմ մղվող մարտերում, անմիջականորեն մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ:

Թիֆլիսի կուսակտիվի 1921 թվականի հունիսի ընդհանուր ժողովում իր տված զեկուցման մեջ ընկ. Ստալինն Անդրկովկասի բոլշևիկներից պահանջում եր՝

«Տրոբել նացիոնալիզմի հիդրան և ստեղծել ինտերնաշխանակիզմի առողջ մթնոլորտ՝ հեշտացնելու համար Անդրկովկասի Խորհրդային հանրապետությունների տնտեսական ջանքերի միացման գործը, պահպանելով այդ հանրապետությունների անկախությունը»:

Անդրկովկասի բոլշևիկները Համ. կ (բ) կ կենտրոնի և ընկեր Ստալինի անմիջական ոպերատիվ ղեկավարությամբ մի շարք տարիների ընթացքում անհաշտ պայքար են մղել նացիոնալ-ռուկանիստական այն տարրերի դեմ, վարոնք համառորեն դիմագրում ելին թե Անդրբեդերացիայի ստեղծմանը և թե նրա քաղաքական ու տնտեսական ամրացմանը:

Ուր եր տանում նացիոնալ-ռուկանիստաների քաղաքականությունը, վեր ճանապարհն ելին մղում նրանք կուսակցությունն ու յերկիրը:

Այդ հարցին սպառիչ պատասխան տվից ընկեր Ստալինը 12-րդ կուսամագումարում իր արտասանած փայլուն ճառում:

«Այդ վտանգավոր ուղին են մղում մեղ, մեր ընկերներ վրացի ուկոնիստները, քանի վոր նրանք պայքար են մղում ֆեդերացիայի դեմ, խախտելով կուսակցության բոլոր որենքները, քանի վոր նրանք ուզում են առանձնանալ ֆեդերացիայից, վորպեսզի պահպանն իրենց նպաստավոր դրությունը»:

Նրանք մեղ մղում են հայկական ու ադրբեջանյան հանրապետությունների հաշվին իրենց մի քանի արտօնություններ տալու ուղին: Մենք չենք կարող գնալ այդ ուղիով, վորպինեան դա՝ կովկասի մեր ամբողջ քաղաքականության և Խորհրդացին իշխանության անխուսափելի մահն են:

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները կտրականորեն մերժեցին այդ ուղին, վորովհետեւ՝ ինչպես մատնաշել եր ընկեր Ստալինը նույն ճառում՝

«Յեթե Խորհրդացին իշխանությունը չկարողանար կազմակերպել Անդրկովկասում աղջային խաղաղության այնպիսի որդանները, վարոնք կարողանային հարթել շփումներն ու

բաղխումները, մենք կվերադառնայինք ցարիզմի ևսոխային կամ դաշնակների, մռւսավաթականների ու մենշերիների եպոխային, յերբ մարդիկ այրում և կոտորում եյին միմյանց» (ԱՏԱԼԻՆ):

Անդրկովկասի բոլշևիկները կատարելով Համկ(բ)կ-ի կենտրոնի և Ստալինի ցուցումները, Սերգո Ռյանիկիձեյի գլխավորությամբ, բանվորների ու աշխատավորների լայն մասսաների հզորությամբ, ջախջախեցին նացիոնալիզմն ու նացիոնալուկոնիզմը և քաղաքականապես ամրացրին Անդրբեդերացիան, ստեղծելով նրա հետագա տնտեսական և կուլտուրական աճմար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Անդրկովկասի կուսակզմակերպությունների հետագա խնդիրն այն եր, վոր ինչպես մատնաշել է Համկ(բ)կ կենտրոնի իր 1929 թվականի հոկտեմբերի 30-ի վորոշման մեջ, Անդրբեդերացիայի որդանները, վորոնք առաջին շրջանում կատարում եյին առավելապես քաղաքական դեր, իրենց ջանքերը կենտրոնացնելին

«Աղջային հանրապետությունների տնտեսական սոցիալիստական շինարարության վրա, նրանց ինքուստրացման, գյուղատնտեսության տեխնիկական ու սոցիալական վերակառուցման վրա»:

Այդ խնդիրն իրագործելու նպատակով Համ կ (բ) կ կենտրոնի առաջարկեց՝

«Ամրացնել Անդրբեդերացիայի տնտեսական բազան, իրականացնել Անդրկովկասի ամբողջ տնտեսական շինարարության իրական ղեկավարությունը»:

Ընդուրում Համ կ (բ) կ կենտրոնի ամենայն վճռականությամբ շեշտել եր, վոր այդ գերեհտիվի կենսագործումը պետք երնթանա

«Միաժամանակ ծավալելով Անդրկովկասոյան Ցեղերացիայի կազմի մեջ մտնող աղջային հանրապետությունների լայն ինքնազործունեյությունը և տնտեսական նախաձեռնությունը»:

Կատարեց արդյոք անդրկովկասյան կուսակցական ղեկավարությունը Համկ(բ)կ կենտրոնի և ընկեր Ստալինի ցուցմները:

Կարողացան արդյոք Անդրկովկասի բոլշևիկները 1930 և 1931 թվականներին իրենց կատարած աշխատանքում Անդրկովկասի տնտեսական ամրացումը դուգակցել ԱՄՖԽՀ-ի մեջ մտնող հանրա-

պեսությունների նախաձեռնության ու ինքնագործունեցության առավելագույն ծավալման հետ:

Վհչ, չկարողացան: Բյուրակրատարար կենտրոնացնելով յերկը տնտեսական ու կուտուրական շինարարության դեկավարությունը, զրկելով հանրապետություններին ինքնուրուցնությունից՝ նրանց առջև դրված հիմնական քաղաքական ու տնտեսական խթնդիրների լուծման բնագավառում, չկարողանալով ամրացնել կուսակցական կազմերը, համախմբել դրանք ՀամԿ(թ)կ կենտկոմի և Ստալինի դիրեկտիվները կատարելու համար մղվող պայքարում, Անդրկովկասի կուսակցական դեկավարությունը չկարողացավ անհրաժեշտ հաջողություններ ձեռք բերել Անդրֆեդերացիայի տընտեսական ու քաղաքական ամրացման համար մղվող պարագաները:

Բովանդակազուրկ դարձնելով հանրապետական կենտկոմների ու ժողովների աշխատանքը, չկարողանալով հարկադրել մարդկանց աշխատել գործարար սկզբունքով, չպատվաստելով կոմունիստներին տնտեսական աշխատանքի հակում, այն ժամանակվա կուսակցական դեկավարությունը չկարողացավ իրականացնել ՀամԿ(թ)կ կենտկոմի կողմից նրա առաջ դրված խընդիրները:

Անսկզբունք խմբակային պայքարի և «ատամանշինայի» մթնոլորտում նա աչքաթող արալ հիմնական պրոբլեմ՝ գյուղի քաղաքական դեկավարությունը և թույլ տվեց մի շարք ամենակոպիտ խեղաթյուրումներ ու խոտորումներ գյուղացիական հարցում:

1931 թվականին Անդրկովկասում և մանավանդ Վրաստանում գյուղացիական հարցում տեղի ունեցած սխալները, վորոնք արտահայտվեցին սոսկ վարչարարությամբ, ընկնելով կոլեկտիվացման ուղղած թվերի հետևից, տառաջալոր հացահատիկային շրջանների փորձը մեքենայորեն փոխադրելով.—պատահական չելին:

Մենք կոպիտ սխալներ ենք ունեցել գյուղացիական հարցում Աջարիստանում 1929 թվականին (մելքրեսեների փակումը, չաղքաներ հանելը), ամենակոպիտ խոտորումներ Ադրբեջանում ու Հայաստանում, Վրաստանի առանձին շրջաններում 1930 թվականին՝ կոլեկտիվացման ասպարիդում:

Այդ բոլորը ցույց ե տալիս, վոր Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները յեղակացրություններ չեյին արել Վրաստանի 1924 թվականի դատերից, այն ցուցումներից, վորը տվել եր այն ժամանակ ընկեր Ստալինը:

Ընկեր Ստալինը հանդես գալով Մոսկվայում գյուղական քջիների խորհրդակցությանը 1924 թվականի հոկտեմբերին՝ ասել եր:

«Մեր թերթերում դրում են Վրաստանի բուտաֆորացին յելույթների մասին: Այդ ճշշտ ե, վորովհետեւ ընդհանուր առմամբ Վրաստանի ապստամբությունն արհեստական եր, վոշ-ժողովրդական: Սակայն միքանի վայրերում, շորհիվ կոմիտաների մասաւաների հետ ունեցած թոյլ կապին, մենշենկ-ներին հաջողվեց գյուղացիական այդ մասսայի մի մասը ներդրավել ապստամբության մեջ: Բնորոշ ե, վոր այդ վայրերն ամենից ավելի յեն հագեցված կոմունիստական ուժերով: Այդ վայրերում համեմատաբար շատ կոմունիստներ կան, քան մյուս վայրերում: Յեղ անա հենց այդտեղ մարդիկ զանց են առել, աչքաթող են արել, չեն նկատել, վոր գյուղացիների մեջ խմորում կա, վոր գյուղացիները պատրաստվում են ինչ-վոր բանի, վոր նրանց մեջ դժգոհություն կա, վոր վերջինս կուտակվել ե որեցոր, իսկ կուսակցությունը վոչինչ չի իմացել դրա մասին»:

«Ի՞նչպես կարող եր տեղի ունենալ այդպիսի անհեթեթություն: Հենց այնպիս, վոր կոմունիստները չեն կարողացել լինինաբար մոտենալ գյուղացիներին, վտահայթյան մթնոլորտի փոխարան ստեղծել են փոխադարձ անվտանգության մթնոլորտ և այդպիսով կուսակցությունը կարել են անկուսակցական գյուղացիներից»:

Այդպիսով, Անդրկովկասի կուսկազմակերպությունների 1929, 1930, 1931 թվականներին գյուղացիական հարցում գործած սխալների արմատն այն եր, վոր կուսկազմակերպությունները բավականաշափ չեյին կապված գյուղացիական մասաների հետ, վոր նրանք, ինչպես մատնանշում ե ընկեր Ստալինը՝

«Կարգավաճ եյին անկուսակցական գյուղացիության տրամադրություններից, խոնկերից ու ակընկալություններից»:

Միմիայն շնորհիվ ՀամԿ(թ)կ կենտկոմի յեռանդագին միաջամտության և ընկ. Ստալինի անձնական դեկավարության ու ոգնության, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունն ուղղեց այդ սխալները:

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ 1931 թ. հոկտեմբերի 31-ին ՀամԿ(թ)կ կենտկոմի ընդունած վորոշումը տվեց գյուղացիական հարցում կուսակցական դեկավարության գործած

սխալների սպառիչ գնահատականը, դատավարութեց յերկրի անտեսական ու կուլտուրական շինարարության ղեկավարության ծայրահեղ կենտրոնացումը, ուժգին հարված հասցընեց խմբակայնությանը և ատամանչինային, վորոշեց այդ սխալներն ուղղելու ձանապարհը:

Իրականացնելով Համեկ(բ)կ կենտրոմի կողմից մեր առաջդրված ինդիքները՝ Անդրֆեդերացիայի տնտեսական ու քաղաքական ամրացումը, յերկրի ինդաւտրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կուսակցական շարքերի համախմբումը, կուսակցական կազմակերպության ամրացումը, Անդրկովկասի բոլցերին զգալի հաջողություններ ձեռք բերին:

Շնորհիվ յերկու տարվա համառ բոլցերիցան պայքարի, վորը պղկեց Համ Կ (բ)կ կենտրոմի դիրեկտիվները և մեր կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ցուցմունքները իրականացնելու ուղղությամբ, մենք տնտեսապես և քաղաքականապես ամրացրինք Անդրֆեդերացիան, միաժամանակ վոչ միայն բոլանդակազուրկ չանելով հանրապետությունների աշխատանքը, այլ և ստեղծելով այդ հանրապետությունների համար լայն նախաձեռնության և ստեղծագործ աշխատանքի բոլոր անհրաժեշտ պայմանները:

Ապահովելով գյուղացիության քաղաքական ճիշտ ղեկավարությունը, յերկրի ինդուստրացման և կոլտնտեսությունների կազմակերպչական ու տնտեսական ամրացման հողի վրա, մենք բերինք ներկայիս միանգամայն կայուն քաղաքական զրություն Անդրկովկասի դյուլում:

Կուսակցական կազմակերպությունն ամբացագով, արմտատախիլ և արգած մեր շարքերից անկըռունք խմբակայնությունը և «ատամանչինայի» տարբերը, վերականգնված և բուլշեկերան կարգապահությունը, կոմունիստները լծվեցին գործնական գործնական գործարարական ամրացումը աշխատանքի, ու ավուրպայքար մղելով կուսակցության անդամների գաղափարական քաղաքական մակարդակը բարձրացնելու, ամբողջ Անդրկովկասայան կուսակցական կազմակերպությունը լենինյան կենտրոնի և կուսակցության սիրելի առաջնորդ ընկ. Ստալինի շարքը համախմբվելու համար (ծափահարություններ):

\* \* \*

Ինդուստրացման բնագավառում ձեռք բերված հաջողությունների հիման վրա, կենսագործելով Համեկ (բ)կ կենտրոմի 1931 թվականի վորոշումն ու ընկ. Ստալինի անմիջական ցուցմունքները, վճռականորեն ուղղելով հին ղեկավարության կողմից գյուղացիական հարցում թույլ տված սխալները, Անդրեկովկասի կուսակցական կազմակերպությունները վերջին յերկուտարվա ընթացքում վճռական հաջողություններ ձեռք բերին գյուղատնտեսության բնագավառում:

Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները բոլցմիւան համառությամբ պայքարեցին կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ու քաղաքական ամրացման համար, կոլտնտեսությունները բոլցերիցան, իսկ կոլտնտեսականներին ունենոր դարձնելու համար և այն հսկայական հնարավորություններն ոգտագործելու համար, վորոնք կան Անդրկովկասի գյուղատնտեսության պայմաններում:

Գյուղում կատարված տնտեսական-քաղաքական աշխատանքի արդյունքները հաստատում են զյուղացիական հարցում Համեկ (բ)կ կենտրոմի 1931 թվականի հոկտեմբերի 31-ի վորոշումից և ընկ. Ստալինի ցուցմունքներից հետո, մեր կողմից կիրառված քաղաքականության հատությունը:

Գյուղատնտեսության ասպարիֆում ցանքերի տարածությունն այդ նույն տարիների ընթացքում հասավ 2 միլիոն 386 հազար հեկտարի, այդ թվում սոցիալիստական հատվածում՝ 1 միլիոն 115.400 հեկտարի: Բարերար գրավեց 235.070 հեկտար տարածություն, թեյը՝ 33.325 հեկտար տարածություն, ծխախոտը՝ 24.470 հեկտար:

Զգալիորեն բարձրացավ խորհունտեսային ու կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը: Հացահատիկային կուստուրանների բերքատվությունը հասավ 9 ցենտների՝ յուրաքանչյուր հեկտարից, 1931 թվականի 7,6 ցենտների փոխարեն, բամբակինը՝ 6,7 ցենտների՝ 1930 թվականի 3,7 ցենտների փոխարեն, թեյինը՝ 803 կիլոգրամի՝ 1932 թվականի 701 կիլոգրամի փոխարեն, ծխախոտինը՝ 6,8 ցենտների՝ 1932 թվականի 5,4 ցենտների փոխարեն:

Գյուղատնտեսության և ջրային անտեսության ասպարիֆում կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարն առաջին հնգամյակում կազմել է 447 միլիոն ոուրլի: հենց միայն

1933 թվականի ընթացքում ներդրվել և 138 միլիոն 300.000 ռուբլի:

Անդրկովկասի վոռոգվող տարածություններն աճել են 230.000 հեկտարով և ներկայում կազմում են 1.484.274 հեկտար:

1930—1933 թվականներին զգալիորեն աճեց Անդրկովկասի պյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը:

ՄՏԿ-ների թիվը 1930 թվականի 6-ից 1933 թվականին հասել է 67-ի:

1933 թվականին ՄՏԿ-ների կողմից մշակվող տարածությունները կազմել են 633 հազար հեկտար, վորոնք զինավորապես զբաղված են տեխնիկական կուտարաններով, վորը կազմում է Անդրկովկասի վողջ ցանքերի տարածության 27 տոկոսը:

ՄՏԿ-ների ու խորհանտեսությունների արակտորների ընդհանուր թիվը աճել է՝ հասնելով 4093-ի՝ 1930 թվականի 1436-ի փոխարեն։ Տրակտորների ընդհանուր կարողությունը հավասար է 59.400 ձիու ուժի:

Այդ տարիների ընթացքում գյուղն ստացել և 48 միլիոն ռուբլու գյուղատնտեսական բարդ և պարզ՝ ինվենտար։ Դրանից ավտոմեքենաներ՝ 463 հատ, կոմբայններ՝ 64, տուրմանվակուումներ՝ 381, տրակտորային կուտիվատորներ՝ 301, բարդ կալսիչներ՝ 796 և այլն։

Մինչ 1933 թվականն Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ կար գերազանցապես ձիու ուժով աշխատող գյուղատնտեսական գործիքներն ու մեքենաները 8.300.000 ռուբլու գումարով։ Չորս տարվա ընթացքում Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ գործող բոլոր գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների արժեքն ավելացել և ավելի քան հինգ անգամով։

## ԿՈԼԵԿՑԻՎԱՅՈՒՄ

Զգալի հաջողություններ են ձեռք բերված կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ու քաղաքական ամրացման գործում։

Կոլտնտեսությունների թիվը աճել է, 1931 թվականի 7120-ից հասնելով 8101-ի, իսկ նրանց մեջ ընդգրկված տնտեսությունների թիվը՝ 1931 թվականին 335.373-ից հասնելով 440.818-ի ու եկտիվացված և Անդրկովկասի գյուղացիական տնտեսությունների 41.2 տոկոսը և ցանքերի վողջ տարածության 42.8 տոկոսը։

Ապահովված և կոլտնտեսությունների առաջատար դերը

տեխնիկական կուլտուրաների—բամբակի, թեյի, ծխախոռի և այլն—արտադրության մեջ։ Բամբակացան շրջանների կոլեկտիվացման տոկոսը 1933 թվականին հասավ 64 տոկոսի, թեյի մշակման շրջաններում՝ 68 տոկոսի։

Կոլտնտեսային շինարարության ասպարեգում ունեցած հաջողությունները ձեռք են բերվել գասակարգային կատաղի պայքարում, կուլակային սարություն և գյուղատնտեսության ասպարեգում տեղի ունեցած վնասարարությունը ջախջախելու հետեւածքով։

ՄՏԿ-ների ու խորհանտեսությունների քաղաքինների ողնությամբ, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները մեծ աշխատանք կատարեցին կուլակային ու այլ հակախորհրդային աշխատանք կատարեցին կոլտնտեսություններից վտարելու ուղղությամբ, վորոնք կոլտնտեսություն եին սողոսկել վնասարարական քայլայիչ աշխատանք կատարելու նպատակով։ Միայն Աղբբեջանի 16 շրջաններում կոլտնտեսություններից հեռացված են 1200 տնտեսություն։ Վրաստանում՝ միայն 1933 թվականի առաջին կիսամյակում՝ կոլտնտեսություններից վտարվել են 3500 տնտեսություններ։ Քիչ չեն կոլտնտեսություններից հեռացված տնտեսությունների թիվը նաև Հայաստանում։ Այդ աշխատանքը շարունակվում է նաև ներկայում։

Կոլտնտեսային կաղըրը խորթ, հակախորհրդային, մենշևիկյան, գաշնակ ու մուսավաթական տարրերից մաքրելու հետ միասին, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները խոշոր աշխատանք են կատարել նաև գուշը բոլցեկիյան ամուր կաղըրերով ամրացնելու ուղղությամբ։ 1932—1933 թվականների ընթացքում մշտական աշխատանքով գյուղ են փոխադրվել մոտ վեց հազար հոգի, Աղբբեջանում՝ 4500 և Հայաստանում մոտ 1500 հոգի։

Կարելի յե առանց չափազանցնելու ասել, վոր գրանով իսկ մեր գյուղն առաջին անգամ զգալի ոգնություն ստացավ քաղաքեց։

12.000 հոգին իլենց ճնշող մեծամասնությամբ զիտություն, աշխատանքի նոր սովորություններ բերին իրենց հետ գյուղ։

Կոլտնտեսությունները կազմակերպչական-տնտեսական ու քաղաքական տնտեսակայից ամրացան։ Կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների յեկամուտն զգալիորեն աճեց։

Յես որինակներ չեմ բերի կոլտնտեսությունների ու կոլ-

տնտեսականների բարեկեցության աճման վերաբերյալ, քանի վոր այդպիսի որինակներ բավական քանակությամբ բերվել են բոլոր հանրապետական համագումարներում:

Կարևոր են ընդգծել, վոր բերված որինակները յեզակի չեն. վոր այդպիսի որինակներ կարելի յե բերել հաղարներով, վոր դգալիքորեն աճել ե բոլոր կոլտնտեսությունների միջին յեկամուաբը: Յերեկ ընկերները մտքերի փոխանակության ընթացքում հանդես կդան և կպատմեն իրենց ձեռք բերած նվաճումների մասին:

Այս ամենն առում ե այն մասին, վոր Անդըրկով կասի կոլտնտեսականներն արդեն 1933 թվականին հաստատապես կանգնեցին ունենալով կյանքի ճանապարհին:

Կոլտնտեսականներն սկսել են ապրել ավելի լավ, կուլտուրականորեն, կոլտնտեսությունները դառնում են բոլշևիկյան:

Յեկամուաների բաշխումը մի այնպիսի բնագավառ ե հանդիսանում, ուր դասակարգային թշնամին ավելի ուժեղ կերպով և գործում, փորձելով խառնել կոլտնտեսության հաշվապահությունը, աշխորերի հաշվառումը, հափշտակումները ու մթերքների վատնումներ կազմակերպել, ուղացնել վարչակառավարչական ծախսերը և դրանով իսկ իջեցնել կոլտնտեսային աշխատանքի արտադրողականությունը, ցցել կոլտնտեսության յեկամուաը:

Անհրաժեշտ ե վճռական հականարգած տալ դասակարգային թշնամու վոտնձգություններին, մերկացնելով նրա բոլոր մեքենայություններն ու ֆաստարարությունները, աշխատանքի ընթացքում իսկ ուղղելով յեկամուաների բաշխման ասպարիզում յեղած բոլոր թերությունները:

## ԱՆԴԱՑԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Չնայած կոլտնտեսությունների աճման, անհատական հատվածն Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ գեռ դգալի տեղ ե գրավում: Անբավարար ուշադրությունը մենատնտեսի՝ վաղվա կոլտնտեսականի՝ նկատմամբ—կուսակցության դիրեկտիվների ու ընկ. Ստալինի ցուցմունքների ուղղակի խախտումն ե հանդիսանում:

Անհատական հատվածը 1933 թվականին, կուսակցության կողմից գյուղում տարվող ճիշտ քաղաքականության հետևանքով,

կատարեց դարնանացանի ու աշխանացանի պլանները և պետության հանդեպ ունեցած պարապորությունները:

Սակայն Անդրկովկասի մի շարք շրջաններում (Կարիագինի, Գորիի, Դիլիջանի) ըլջանային կուսակցական կազմակերպությունները գեռաւ հարկ յեղած ուշադրություն չեն նվիրում մենատընտեսների մեջ կատարվող աշխատանքի հարցերին:

Առանձին բջիջներ ու գյուղակորհուրդներ շերտավորված մոտեցում չեն ունենում մենատնտեսի նկատմամբ, յերբեմն ազնիվ մենատնտեսին, աշխատավորին չեն տարբերում սպեկույանտից:

Անհրաժեշտ ե պայքարել դրա գեմ, անհրաժեշտ ե ամեն կերպ հեշտացնել աշխատավոր մենատնտեսի ճանապարհը դեպի կոլտնտեսություն:

Ընկերներ, այստեղ ինձ մոտ ե Անդրկովկասի կուսակցական կաղմակերպությունների վեցերորդ համագումարի սղագիր հաշվառվությունը:


Յերեք և կես տարի սքանից առաջ, կուսակցության Յերկրային կոմիտեն իր պաշտոնական գեկուցող ընկ. Շարիս Ելիավայի բերանով տրված հաշվետու զեկուցման մեջ, հետեւյալ կերպ ե բնորոշել Անդրկովկասի գյուղատնտեսության վիճակը: Բերում են բառացիորեն—

«Այժմ յես անցնում եմ գյուղատնտեսության հարցերին... այստեղ մենք հետ ենք մնում բարեխղճորեն և տաղանդավոր կերպով: Այստեղ մենք խնդիր չենք դնում վորելին մեկին հասնել և անցնել» (6-րդ համագումարի հաշվետվություն, եջ 230):

Ընկերներ, այն ժամանակաշրջանի գյուղատնտեսության այս սպանիչ գնահատման լույսի տակ միթե հսկայական չեն մեր հաջողությունները: Անդրկովկասի գյուղատնտեսության ներկայիս վիճակը, վորեւ չափով նման ե արդյոք նրան, ինչ յեղել ե ընդամենը 3 տարի սրանից առաջ:

Հանրապետական համագումարներում գյուղատնտեսության հարցերը մանրազնին քննության յենթարկվեցին: Միաք չունի իմ կողմից կրկնել այն, ինչ արդեն ասված ե, ինչ արդեն հայտնի յե ձեզ բոլորիդ:

Յես միայն կհիշեցնեմ ձեզ մի քանի թվեր, վորոնք ամենաընդհանուր գերեզման կարագրում են գյուղատնտեսության առանձին հիմնական ճյուղերի վիճակը:



բԱՐԵՎԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Վերցնենք որինակ՝ բամբակագրծությունը։ Համ Կ (Բ) Կ կենտկոմի 1931 թվականի վորոշումը խնդիր զբեց մեր առաջ Անդրկովկասը գարձնել Խորհրդային Միության յերկրորդ բամբակագրծական բազան։

Մինք այդ խնդիրը լուծեցինք ավելի պակաս, քան յերկու տարվա ընթացքում: Անդրկովկասը, մասնավորապես Աղբբեջանը, վոչ միայն Միության լերկորրդ բամբակազործական բաղան պարձագիր, այլև նա կանգնած է յեղիպատական բամբակի կարեռագույն բաղան դառնայութ ճանապարհին:

Յեղիպտական բամբակի ցանքերը ներկայումս գրավում են հազար հեկտար տարածություն՝ 1930 թվականի 40 հեկտարի փոխարեն:

235 հազար հեկտար բամբակի ընդհանուր տարածությունից արդեն հավաքված ե 147.477 տոնն բամբակ, կամ պլանի 100,1 տոկոսը՝ Բերքատավությունը բարձրացել է մինչև 6,7 ցենտաների՝ 1930 թվականի 3,7 ցենտաների փոխարեն:

իսկ ի՞նչ դրություն եր 6-րդ համագումարի ժամանակ։  
Նույն հաշվետվության մեջ, 232-րդ եթի վրա ասված ե-

«Վերջին յերեք տարիների ընթացքում մենք դեպի ցած ենք գնում 78 հազար տոննից մենք անցյալ տարի իջանք մինչև 56 հազար տոննի: Անցյալ տարի մենք պետք են հավաքելինք 82 հազար տոնն բամբակ, սակայն չհավաքեցինք, վրովինետե հայտնի չեն, թե ի՞նչ պատճառերով շատ տեղերում բամբակը մնաց դաշտում»:

Ահա թե ինչ դըությունն եր բամբակի ասպարիզում՝ յերեք  
տարի առաջ: Միթե հակայական չեն մեր հաջողությունները բամ-  
բակագործության ասպարիզում, հնարավիր և արդյոք, վոր այժմ  
վորեւ մեկը համագումարի ամբիոնից հայտարարի, թե՝ «հայտնի-  
չե, թե ինչ պատճառներով վորեւ տեղ բամբակը հավաքված չեա:  
Անեկդոտ կատացվի (ծիծաղ): Բամբակը հավաքված չեր, վորով-  
հեաւ գրանով այն ժամանակ քիչ եյին զբաղվում թեկուղ և շատ  
ելին խոսում նորա մասին:

Մեր հաջողությունները հսկայական են. սակայն հանդստանալ դրա վրա, փակել մեր աչքերը հնատագա զարդացման ասպարիգում մեր առջև կանգնած դժվարությունների հանդեպ՝ մենք չենք կարող:

Անհրաժեշտ և անմիջապես սկսել առաջիկա բամբակացանի կամպանիայի նախապատրաստությունը:

ԱՆՀՐԱԺԵՂՄ և ապահովել ցանքը ժամանակին կատարելը՝  
մաքուր տեսակի սերմեր ցանելը, բամբակի համար լավագույն  
հողամասեր առանձնացնելը, ցանքի մշակման, քաղհանի ու բեր-  
քահավաքի շրջանում ազրոտեխնիկական բոլոր կանոնների լիա-  
կատար պահպանումը: ԱՆՀՐԱԺԵՂՄ և վճռականորեն բարելավել  
աշխատանքի կազմակերպումը մթերագնման կայաններում, նա-  
խատեսիլ անհրաժեղս քանակությամբ՝ բարդանների թիվը և  
այլն: Բամբակաղտիչ գործարանները պետք ե աշխատեն հստակ  
կերպով, յայի ժամացույցի նման:

Համագումարի անդամների համար այս ամենը պարզ ու տարբական խնդիրներ են, սակայն պարզ բաների մասին խռով-լը յերբեմն վասակար չե, վորովհետև դրանից և կազմվում բամբակի ասպարիզում կիրառվելիք անհրաժեշտ ձեռնարկութենքի վողջ գումարը:

